ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 նոյեմբերի 2019 թվականի N 102 Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման 4-րդ հավելվածի տեղեկանքի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի N 01/18/18077-19 հանձնարարականը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի համապատասխան որոշումներով հաստատված սուբվենցիայի ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների քանակի և որակի նկատմամբ հսկողություն սահմանելու, գործող նորմերին համապատասխանությունը ճշտելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով

1	Ավետիսյան Ռազմիկ -	ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ, աշխատանքային խմբի ղեկավար
2	Մարտիրոսյան Վարդան -	Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ
3	Արզումանյան Արթուր -	ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ
4	Հարությունյան Սարիկ-	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի տարածքային բաժնի պետի տեղակալ (համաձայնությամբ)
5.	Բաղդասարյան Վարդան-	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության գլխավոր մասնագետ (համաձայնությամբ

2. Աշխատանքային խմբին.

Ուսումնասիրել 2019թ. սուբվենցիայի ծրագրերի շրջանակներում մարզում կատարված աշխատանքների՝ գործող նորմերին համապատասխանությունը և որակը, յուրաքանչյուր ծրագրի մասով եզրակացությունը ներկայացնել քննարկման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

14.11.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 14
ք. Կապան